իմո, կողակցին Բեզադին, ուղւոյն Ասիբէկին· ի ժամանակս Շահ Սեֆին, խանութիւն Մուրթուզա ղուլի խանին թահուլդ. կաթուղիկոս Գանձասարայ տէր Գրիգորին. թվ. :ՌՂԶ: ին (1647):

*Ծանոթ. Ըստ երևույթին Ջալալյանցի ժամանակ ավելի ամբողջական է եղել, որից և առնում ենք հիմնականում։*

*Հրատ. Ջալալեանց, I, 210։ Բարխուդարեանց, 252։ Լալաեան, V, 334։*

## 91. ԿԱՄՈ ԳՑՈՒԳ (ՀՆՍԻՄ՝ ԲԱԽՇԻԿ)

*Այս գյուղը ավերված է եղել։ 1870 թ. շենացրել են Հաջիքենդի վերաբնակիչները։ Մի քանի տասնամյակ առաջ թողնելով նախկին հարմար դիրքը, գյուղը տարածել են ներքև, 1 1/2 կիլոմետր դեպի արևմուտք։ Նախկին գյուղատեղում մնում է կիսավեր եկեղեցին, թաղածածկ և կոփածո քարերով շինված. պատերի մեջ որպես շինանյութ դրված են խաչքարեր և տապանաքարեր։ Եկեղեցին կոչվել է Ամենափրկիչ։*

*Գյուղից մոտ երեք կիլոմետր հարավ, խճուղու եզրին, այժմ Մուրթունիս կոչվող հանդամասում մնում են գյուղի ավերակները։ Բարխուդարյանցի ժամանակ գյուղատեղը կոչվել է* Մրցունիս, *այժմ անվանում են* Մուրթունիս:

*Այս միջավայրից հավաքած մեր 14 արձանագրությունից 10-ը հրատարակվում են առաջին անգամ։*

*881. **ԽԱՉՔԱՐ**, գեղաքանդակ, ագուցված է հարավային պատի մեջ, ներքուստ, քիվին և թևերի շուրջը 3 տող.*

ԽՉՍՓՐԿՈՒԹԻՀՈԳՈՆ ԹՐՎ
ԹՎ ՌԲ

ԷՄԻՆ Խ˪Ա˩ՉՍ ՓՐԿՈՒԹԻ. ՀՈԳՈ˪Ց˩Ն ԹՐՎ|ԷՏԻՆ. ԹՎ˪ԻՆ˩ :ՌԲ: (1553):

Ծանոթ. Թրվէտ *անձնանունը, հավանաբար,* Թուրվանդ-*ի տեղական ձևն է։*

*882. **ԽԱՉՔԱՐ**, ագուցված է արևմտյան պատին, արտաքուստ. թևերի շուրջը միայն թվականը.*

ԹՎ ՌԳ

ԹՎ˪ԻՆ˩. :ՌԳ: (1554):

*883. **ԽԱՉՔԱՐ**, փոքր, ագուցված է հարավային մուտքի արևմտյան կողին. քիվին 2 տող.*

ՍԲԽՉՍ ԷՏԳԱՐԵՂԵՍ
ԱՊԵՏԹՎՌՀԹ

ՍԲ. Խ˪Ա˩ՉՍ ԷՏԳԱՐ˪Ի˩Ն, ԵՂԵՍ|ԱՊԵՏ˪Ի˩Ն. ԹՎ˪Ի˩Ն :ՌՀԹ: (1630):

*Հրատ. Բարխուդարեանց, 269։*

*884. **ԽԱՉՔԱՐ**, ագուցված է հարավային ավանդատան արևելյան պատին, ներքուստ. քիվը ծածկված պատով. թևերի շուրջը 4 տող.*

ՍԲ ՄԽ
ԽՉՍ Ի Թ
ՀՈԳ ԱՐ
ԻՆ

ՍԲ. Խ˪Ա˩ՉՍ ՄԽԻԹԱՐԻՆ ՀՈԳ˪Ո˩ՑՆ˪Ի˩:

885. **ԽԱՉՔԱՐ**, *ագուցված է արևմտյան պատին, ներքուստ. քիվին ծերի 1 տող.*



ՍԲ. Խ‚Ա,ՉՍ ՀՈՌՈՒՄԻՆ . . . .

886. **ԽԱՉՔԱՐ**, *ագուցված է հարավային պատին, ներքուստ, քիվին 1 տող.*



Խ‚Ա,ՉՍ ԱՐՈՒՍԽԻՆ։

887. **ԽԱՉՔԱՐ**, *ագուցված է եղել բեմի ճակատին, այժմ ընկած է. քիվին 1 տող.*



Խ‚Ա,ՉՍ_ՀԱՆԻՆ։

888. **ԽԱՉՔԱՐ**. *ագուցված է հարավային ավանդատան պատրհանի գլխին, որպես ծածկ. երևացող կողին 11 տող.*



ՍԲ. |ԽԱՉՍ| ՄԱՐ|ԵԱՆ|ԻՆ, ԱՍ|ԻՐԻՆ| Գ‚Ի,Լ|ՈՒՄԻՆ|, ԱՂԱ|ՊԷԿ|ԻՆ։

889. **ՄԱՐԹՈՒՆԻՍԻ ԵԿԵՂԵՑՈՒ** *արևմտյան պատի ստորին մասում, արտաքուստ, ագուցված է կիսակամար բարավորի վրա. 12 տող.*



Թ‧Վ‚ԻՆ, :ՉԼ‧Դ: (1285) |ԿԱՄԱՒՆ ԱՑ. ԵՒ ՀՐԱՄԱՆԱՒ ՍԲ.| ՀԱՑՐԱՊԵՏԻՆ ՏՐ. ԸՍՏԵՓ|ԱՆ|ՈՍԻ|, ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹ‧Ե. ՏՐ. ԳՐԻ|ԳՈՐԻ |ԵՒ ԻՇԽ|ԱՆՈՒԹ‧Ե. ՍՈՄԱ-

ՃԻՆ, ԵՍ ՅՈՎ|-ԱՆ⌊Է⌋Ս · · · · · · ԱՆԷՈՍ ԵՐԵՑ ՇԻՆԵՑ|ԱՔ ԶՍ̅Բ. ⌈ԵԿԵՂԵ-
ՑԻՍ Ի⌉ ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹ̅Ի ՀՈԳ|ՈՑ ԵՒ ՏՈ⌈ՒՍ.Բ · · · · · · · |· · · · · · ·
· · ·| · · · · · · · · |· · · · · · · | ՑԵԿԵՂԵՑԻՍ ՏՎԻ. ԶԱՏԻԿ ԱԻՐ
ԺԱՄ ԻՆՁ ԱՌՆԵՆ.| ՈՎ · · · · · ԽԱՓԱՆԷ ԶԻՄ ՄԵՂԱՑՆ ՏՐ. Է։

Ծանոթ. *Բաց մնացած տեղերում քարը շերտ-շերտ թափված է, այդպես է եղել դեռևս Բարխուդարյանցի ժամանակ, որը միայն կեսն է արտագրել։*

*Հրատ. Բարխուդարեանց, 267։*

**890.** ***ՄՈՒՐԹՈՒՆԻՍԻ ԵԿԵՂԵՑՈՒ** արևմտյան պատի հյուսիսային անկյունում, արտաքուստ, ագուցված խաչքարի ստորին մասի վրա. 3 տող.*



ԹՎԻ :ՉԼԱ: (1282). ԵՍ ՇԱՀԱՆՇ|ԱՀ ԿԱՆԳՆԵՑԻ ԶՍ̅Բ. ՍԱՐԳԻՍՍ Ի|ՆՁ ԵՒ ԵՂԲԱՐ ԻՄՈՑ ՎԱՐ-ԴԱՆՇԱՀԻ։

Ծանոթ. *Հրատարակիչը խիստ աղավաղել է։*

*Հրատ. Բարխուդարեանց, 267։*

Լուսանկ. 131.

**891.** ***ՄՈՒՐԹՈՒՆԻՍԻ ԵԿԵՂԵՑՈՒ** հարավային պատի մեջ ագուցված մի քարի վրա. արտաքուստ. 5 տող.*



ԵՍ · · · · · · · |ԶԱՏԻԿ Ի ՑԻՄ|ՀԱԼԱԼ ԸՆՁԻՑ ՄԻԱԲԱ|ՆԵՑԱ ՍԲ. ԵԿԵՂԵՑԻՍ, ԵՒ|ՏՎԻՆ Ի ՏԱՐՈՋ :Ա: ԱԻՐ| · · · · · · · · · |։

**892.** ***ՄՈՒՐԹՈՒՆԻՍԻ ԵԿԵՂԵՑՈՒ** արևմտյան պատին, արտաքուստ ագուցված խաչքարի քիվին և ստորին մասում, 3 տող.*



Ս̅Բ. Խ⌊Ա⌋ՉՍ ԲԱՐ⌊ԵԽ⌋Ա⌊Ւ⌋Ս ՄԽԻԹ⌊Ա⌋Ր⌊Ի⌋Ն ԵՒ ԿՈՂԱ⌊ԿՑ⌋ԻՆ| ԵՒ ՑՈՒՀԱՆԷՍԻՆ ՄՈՐՆ ՑՈՒՐԱԾԽԱՆԻՆ. ԹՎ⌊Ի⌋Ն⌋ :ՌՁԸ: (1639)։

Ծանոթ. *Առաջին անձնանունը՝ ՑԻԽԹԱՐ, կարող է Մխիթար անվան սխալ գրչություն լինել. նաև Ցիխթիար կարող է կարդացվել։*

*Մյուս անձնանունները ևս կասկածելի են, որովհետև գրիչը Ց և Ծ տառերը միատեսակ է փորագրել։*

Լուսանկ. 132.

**893.** ***ՄՈՒՐԹՈՒՆԻՍԻ ԵԿԵՂԵՑՈՒ** արևմտյան պատի վերին մասում ագուցված գեղաքանդակ խաչքարի քիվին, եղծված, 2 տող.*



· · · · · |· · ԹՎ⌊Ի⌋Ն⌋։ ՌԿ · · · · (1511)։

Լուսանկ. 132ա

**894. ԽԱՉՔԱՐԻ** *վրա, որը եղել է եկեղեցու մուտքի մոտ.*

Յովհանէսի մօրն Նուրացիանին։

*Հրատ. Բարխուդարեանց, 266։*

## 92. ԱՋԱՏ—ՍՈՒԼՈՒԿ ԳՅՈՒՂ

*Գյուղը վերջին տասնամյակներում մոտ 2 կմ տեղափոխվել է դեպի արևելք։ Հին վայրում մնացել է ճեղքված քարերով շինված և չորս սյուների վրա հաստատված թաղակապ եկեղեցին՝ քայքայված վիճակում։ Այդ շենքը, հավանաբար, XVII դարի է, բայց պատերի մեջ գործածել են ավելի հին գերեզմանաքարեր և խաչքարեր, որոնցից միայն մեկի վրա կան արձանագրության մնացորդներ։*

*Հին գյուղատեղից վերև, դեպի արևմուտք, անտառի մեջ եղել է Սուլուկի կամ Երմողեա քահանայի վանք կոչված մատուռը, որն այժմ հիմնովին ավերված է և քարերը տարված։*

*Հիշատակված արձանագրություններից տեղում ոչինչ չի մնացել. բոլորն առնում ենք հին հրատարակություններից։*

**895. ՍՈՒԼՈՒԿԻ ՎԱՆՔ ՄԱՏՈՒՌԻ** *մուտքի կամարակալ քարի վրա.*

Թուին :ՁԻԸ: (1279). Ես Մխիթար ու Տիրածէր շինեցաք զեկեղեցիս ի հայրապետութեան տէր Ըստեփաննոսի Աղուանից կաթողիկոսի։

*Հրատ. Բարխուդարեանց, 270։ Լալաեան, V, 317։*

**896. ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄ,** *մուտքից վեր.*

Ապաղայ Ելչ խանին ու Խարայնախին Աւառս լեռով շինեցի զեկեղեցիս։

Ծանոթ. *Անշուշտ սխալներով է վերծանված.*

*Հրատ. Բարխուդարեանց, 270։ Լալաեան, 318։*

**897. ՆՈՒՅՆ ՄԱՏՈՒՌԻ ՄԵՋ,** *տապանաքարի վրա.*

Այս է հանգիստ Սայի որդի Հասանայ փեսայիս:

*Հրատ. Բարխուդարեանց, 270։*

**898. ՆՈՒՅՆ ՄԱՏՈՒՌԻ ՄԵՋ,** *խաչքարի վրա.*

Թվ. :ՈԻԳ։ էր (1174)։

*Հրատ. Բարխուդարեանց, 270։*

**899. ՆՈՒՅՆ ՄԱՏՈՒՌԻ ՄՈՏ,** *տապանաքարի վրա.*

Այս է հանգիստ Միսայէլայ. Սասնի որդի, որք կարդէք՝ յաղաւթս յիշեցէք. թվ. :Չ: (1251):

*Հրատ. Բարխուդարեանց, 270։*

**900. ՆՈՒՅՆ ՄԱՏՈՒՌԻ ՄՈՏ,** *խաչքարի վրա.*

Կամաւն աստուծոյ կանգնեցաւ սուրբ նշանս ի բարեխաւսութիւն Մալունկին և ծնողաց իւրոց և եղբարց իւրոց Արթուշին, Խաւչին, Շահմէլիք խաթունին. թվ. :ՊՂԶ: (1447)։

*Հրատ. Բարխուդարեանց, 270։*

**901. ՆՈՒՅՆ ՄԱՏՈՒՌԻ** *հյուսիսային կողմում.*

Այս է հանգիստ Ջևանայ, որդի Հասանայ. ի թվ. :ՉԿԴ: (1315):

*Հրատ. Բարխուդարեանց, 270։*